ԱՐՄԵՆ ԺԱՄՀԱՐՅԱՆ
ARMEN ZHAMHARYAN

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՂՐԻԲԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1989-1995թթ.

Թուրքիան և Մաղրիբի արաբական երկրները 1989-1995թթ. ընթացքում ունեցել են ոչ միայն երկկողմ հարաբերություններ, այլև ձգտել են կառուցել իրենց հարաբերությունները նաև բազմակողմ մակարդակով, ինչը նույնպես նպաստել է երկու կողմերի հարաբերությունների սերտացմանը: Բացի այս, երկու կողմերի փոխհարաբերությունների վրա զգալի ազդեցություն են գործել նաև գերտերությունների, եվրոպական մեծ պետությունների վարած քաղաքականությունները տարածաշրջանում և միջազգային ասպարեզում: Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների փոխհարաբերությունների վրա ազդեցություն են գործել նաև տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների շրջանակներում համագործակցությունը, ինչպես նաև հարևան ու տարածաշրջանային պետությունների հետ փոխհարաբերությունները, քրդական, ջրի հիմնախնդիրները և այլն: Ուստի 1989-1995թթ. ընթացքում Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների միջև փոխհարաբերությունները ներկայացնելու համար շատ կարևոր է բացի երկկողմ հարաբերություններից, ներկայացնել նաև Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների հարաբերությունները միջազգային և գլոբալ զարգացումների համատեքստում:

1989թ. ստեղծվեց Արաբական Մաղրիբի միությունը՝ նպատակ ունենալով միավորել Մաղրիբի արաբական երկրներին: Թուրքիան, որը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարում ամեն ինչ անում էր Մաղրիբի արաբական երկրների հետ սերտ հարաբերություններ ունենալու համար, այս կառույցի հետ առանձին հարաբերություններ չհաստատեց և մինչև օրս էլ չի հաստատել՝ նախընտրելով սերտացնել իր հարաբերությունները երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին[1]: Ակնհայտ է, որ երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին հարաբերություններ հաստատելը Թուրքիային հնարավորություն է տալիս Արաբական Մաղրիբում մեծ քաղա-

[1] http://www.mfa.gov.tr/synopsis-of-the-turkish-foreign-policy.en.mfa Turkey's relations with the Arab Maghreb Union (AMU)

քական կշիռ ունենալ և Մաղրիբի երկրներին ավելի սերտ ինտեգրել իր տնտեսությանը: Մյուս կողմից Արաբական Մաղրիբի միությունը չդարձավ այնպիսի սեռ ինտեգրված կառույց, ինչպիսին Եվրամիությունն է կամ անգամ ԾԱԵՀԽ-ը: Բացի այս, տարբեր ժամանակներում նրա անդամ-երկրների միջև մրցակցությունների հետևանքով կային լուրջ հակասություններ, ինչը թուլացնում էր կառույցի միասնականությունը և ևս մեկ պատճառ էր, որ Թուրքիան ուղղակի հարաբերություններ չհաստատի կառույցի հետ, այլ նախընտրի սերտացնել իր հարաբերությունները անդամ երկրների հետ առանձին-առանձին: Միջազգային կառույցների կազմում Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների միջև համագործակցությունը ընդգրկում էր ոչ միայն քաղաքական, տնտեսական և այլ ոլորտները, այլև այնպիսիք, ինչպիսին է առողջապահությունը, ինչի պատճառ կարելի է համարել գլոբալացման գործընթացները և Թուրքիայի ու Մաղրիբի արաբական երկրների բավականին սերտ հարաբերությունները: Մասնավորապես խոսքը գնում է ավելի վաղ հիմնադրված և արդեն 1989թ-ին լիարժեք կերպով գործող 19-անդամ պետություններ ունեցող "Mediterranean Burns Club" (MBQ)-ը, որի անդամ երկրների կազմում կային Թուրքիան, ինչպես նաև Մաղրիբի արաբական երկրներից Ալժիրը, Լիբիան, Մարոկկոն և Թունիսը[2]: Կազմակերպությունը իր առջև նպատակ է դրել համախմբել միջերկրականի երկրների մտավոր ներուժը՝ այնպիսի կարևոր երևույթի դեմ պայքարելու համար, ինչպիսին այրվածքն է: Ակնհայտ է, որ հիմնադրումից հետո կառույցի մասնագետների փոխանակման, վերապատրաստման ծրագրերը նաև նպաստում էին միջերկրականի երկրների շրջանակներում Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների միջև հարաբերությունների սերտացմանը: 1989թ. ստեղծվեց Երեխաների իրավունքների պաշտպանության համաձայնագիրը, որը 1990թ. հունվարի 26-ին ստորագրեցին Ալժիրը (վավերացվեց 1993թ. ապրիլի 16-ին), Մավրիտանիան(վավերացվեց 1991թ-ի մայիսի 16-ին) և Մարոկկոն(1993թ. հունվարի 26-ին): Թունիսը ստորագրեց 1990թ-ի փետրվարի 26-ին (վավերացվեց 1992թ. հունվարի 30-ին), իսկ Թուրքիան՝ 1990թ. սեպտեմբերի 14-ին (վավերացվեց 1995թ. ապրիլի 4-ին): Լիբիան համաձայնագրի անդամ դառնավ 1993թ. ապրիլի 15-ին[3]: Բացի այս, արդեն 1990թ. Թուրքիան և

---

[2] http://www.medbc.com/annals/review/vol_4/num_2/text/vol4n2p114.htm Masellis M., Gunn S.W.A. THE MEDITERRANEAN BURNS CLUB: THREE YEARS OF ACTION , Annals of the MBC - vol. 4 - n'2 - June 1991

[3] http://treaties.un.org/pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=IV-11&chapter=4&lang=en
Convention on the Rights of the Child, New York, 20 November 1989

Մաղրիբի արաբական երկրները ստորագրեցին Միգրացիոն աշխատուժի և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության միջազգային համաձայնագիր: Մաղրիբի արաբական երկրների և Թուրքիայի այսպիսի միջազգային համաձայնագրերին միանալը նպաստում էր Մաղրիբի արաբական երկրների և Թուրքիայի համաձայնագրերին վերաբերող ոլորտներում միատեսակ իրավական համակարգեր ունենալուն, ինչը իր հերթին նպաստում էր փոխհամագործակցության սերտացմանը:

Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների փոխհարաբերությունների վրա իրենց ուրույն կարևոր ազդեցությունն են թողել նաև տարածաշրջանում 1989-1995թթ. տեղի ունեցած զարգացումները, որոնց առկայությունը ստիպել է Թուրքիային սերտացնել իր հարաբերությունները Մաղրիբի արաբական երկրների հետ: Գործոններից մեկը Թուրքիայի հարաբերություններն են Իրաքի և Սիրիայի հետ: Ունենալով այս երկրների հետ ջրային, տարածքային, կրոնական խնդիրներ, իր տարածքում այս երկրների կողմից քրդական անջատողական շարժումներին ֆինանսավորելու խնդիրներ, ինչպես նաև հանդիպելով այս երկրների ղեկավարության քաղաքական ամբիցիաներին՝ Թուրքիայի համար Մաղրիբի արաբական երկրների հետ հարաբերությունները սերտացնելը ուներ կարևոր նշանակություն, քանի որ այդ դեպքում Թուրքիան ավելի ամուր դիրքերից հանդես կգար նշված երկրների հետ հարաբերություններում: Պետք է հաշվի առնել այն, որ չնայած վերը նշված խնդիրները գոյություն ունեին արդեն երկար ժամանակ, սակայն 1989-1995թթ. այս երկրների միջև արդեն առկա նշված խնդիրներում ի հայտ եկան լարվածության նոր աղբյուրներ: Մասնավորապես 1990-ական թթ-ին Սիրիայի և Իրաքի հետ ունեցած հարաբերություններում լարվածություն առաջացավ ջրի խնդրի պատճառով, քանի որ 1990-ականներին Թուրքիայում մեկնարկեց հսկայածավալ Հարավարևելյան Անատոլիական նախագիծը (Guney Doug Anadolu Projesi), որով նախատեսվում էր բազմաթիվ ջրամբարների կառուցումը Երիփրատ և Տիգրիս գետերի վրա, ինչը լուրջ անհանգստություն առաջ բերեց ջրի պահանջարկ ունեցող Սիրիայում և Իրաքում: Այս երկրների հետ նշված խնդիրներում առավելագույն առավելություն ունենալու քաղաքականությունը այն պատճառներից է, որոնց համար Թուրքիան սերտացնում էր իր հարաբերությունները Մաղրիբի արաբական երկրների հետ[4], ինչը նրան ամուր դիրքեր էր ապահովում և տարածաշրջանում, և արաբական աշխարհում:

---

[4] Դոգմիսկ այն դեպքում, երբ վերը նշված խնդիրները հրատապ չէին, կամ հաջողվում էր առաջխաղացում ունենալ(որ Թուրքիայի շանքերով 1994թ. փետրվարին Ստամբուլում կայացավ Իրանի Թուրքիայի և Սիրիայի ԱՀԿՆ նախարարների հանդիպում, որտեղ կողմերը դեմ արտահայտվեցին քրդական պետության ստեղծմանը, պաշտպանեցին

1989թ. լուրեր տարածվեցին, որ Թուրքիան պատրաստվում է ջուր վաճառել Իսրայելին: Լուրերի հիմնական պատճառը այն էր, որ Իսրայելը հետաքրքրություն էր ցուցաբերել կանաղական «Մեյուզա» ոռոգման տեխնոլոգիաների նկատմամբ, որոնք հնարավորություն էին տալիս պլաստիկ տարաներով ջուր փոխադրել ծովային ճանապարհով: Այսպիսի հնարավոր զարգացումները հակազդություն առաջացրին արաբական երկրների և հատկապես Լիբիայի կողմից: Այս հարցում Լիբիայի հակահսրայելական կտրուկ դիրքորոշումը կարելի է բացատրել ոչ միայն վերջինիս հակահսրայելական դիրքորոշմամբ, այլ նաև այն հանգամանքով, որ Լիբիան ինքն էլ ջրի խիստ պակաս ուներ և որպես խնդրի լուծման առավել հնարավոր տարբերակներից մեկը դիտում էր Թուրքիայից ջրի ներկրումը: Հարաբերություններ լարվածությունը հանգեցրեց նրան, որ ի վերջո 1990թ. հունվարին Թուրքիայի ԱԳ նախարար Ալի Հուսրև Բոգերը հայտարարեց. «Չկա Իսրայելին ջուր վաճառելու որևէ ծրագիր»»[5]: Թուրքիայի ԱԳ նախարարը միաժամանակ նաև հայտարարեց, որ չկա որևէ ծրագիր ապահովելու բարեկամական արաբական երկրներին ջրով:

1991թ.՝ ծոցի պատերազմի ժամանակ, Թուրքիան չնայած զորքեր չհատկացրեց պատերազմի համար, սակայն թույլատրեց կոալիցիոն զորքերին իր օդանավակայանները օգտագործել պատերազմի համար, ինչպես նաև Իրաքի հետ սահմանային մասում շուրջ 100 000-անոց զորք կուտակեց[6], ինչը ստիպեց Սադամ Հուսեյնին նույնպես այդ շրջանում զորք կենտրոնացնել՝ նվազեցնելով նրա զորքերի թիվը Իրաքի հարավում: Ծոցի պատերազմի ժամանակ կոալիցիոն զորքերին աջակցելու Թուրքիայի այս քաղաքականությունը Մադրիդի արաբական երկրները տարբեր կերպ գնահատեցին: Մարոկկոն, որը ինքն էլ զորքեր ուներ կոալիցիոն ուժերի կազմում, չէր կարող բացասական վերաբերվել Թուրքիայի այս քայլերին: Իսկ Ալժիրը և Լիբիան բացասական գնահատեցին Թուրքիայի բաղաքա-

---

Իրաքի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև համաձայնության եկան «ահաբեկչական» գործողությունների դեմ համատեղ ուժերով պայքարելու հարցը»» Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և Նորագույն պատմություն, Հեղ. հրատ., Ե. 2003, էջ 261). այնուամենայնիվ Թուրքիայի դեկավարությունը հասկանում էր, որ նշված հաջողությունները ժամանակավոր են և հնարավոր է հարաբերությունների նոր լարվածություն Իրաքի և Սիրիայի հետ վերը նշված խնդիրների պատճառով, ինչը թթան էր հանդիսանում Մադրիդի արաբական երկրների հետ հարաբերությունները սերտացնելու գործում:

[4] http://www.apnewsarchive.com 1990/Water Complicates Turkey's Relations With Neighbors/id-0931ba81b1f80ba9da5c94c1fc5b25ac?SearchText=Ali%20Hussein%20Bogeri%20Israel%20Israel, Display_ Water Complicates Turkey's Relations With Neighbors, Jun. 18, 1990

[6] Yasemin Çelik, Contemporary Turkish foreign policy, Praeger Publishers,Westport 1999, p.77

կանությունը Ծոցի պատերազմի ժամանակ, Լիբիայի առաջնորդ Մուամար Կադաֆին նույնիսկ կոչ արեց թուրքերին անհապաղ գնալ և փակել Թուրքիայի ամերիկյան բազաները[7]: Մավրիտանիան, որը Իրաքին օգնելու համար այնտեղ զորքեր էր ուղարկել[8], ևս չէր կարող դրական գնահատել Թուրքիայի այս քայլերը ու այսպիսի դիրքորոշումը Ծոցի պատերազմի ժամանակ: 1991թ. Եգիպտոսը հանդես եկավ «Միջերկրածովյան ֆորում» ստեղծելու առաջարկով, և արդեն 1994թ. հուլիսին տեղի ունեցավ առաջին նիստը[9]: «Միջերկրածովյան ֆորում»-ը իր մեջ ներառում էր 11 երկրներ (Ալժիրը, Եգիպտոսը, Ֆրանսիան, Հունաստանը, Իտալիան, Մալթան, Մարոկկոն, Պորտուգալիան, Իսպանիան, Թունիսը և Թուրքիան), այս թվում նաև Մաղրիբի արաբական երեք երկրներին՝ Մարոկկոյին, Թունիսին և Ալժիրին: Ֆորումի մասնակից պետություն էր նաև Թուրքիան: Միջերկրածովյան Ֆորումը ևս մեկ կառույց էր, որի շրջանակներում Թուրքիան և Մաղրիբի արաբական երկրները 1989-1995թթ. ընթացքում իրականացնում էին համագործակցություն բազմակողմ մակարդակով:

1992թ. դեկտեմբերի 9-ին միջազգային ուժերը ԱՄՆ-ի գլխավորությամբ ափ իջան Սոմալիում՝ նպատակ ունենալով Սոմալիում հաստատել խաղաղ իրավիճակ: Միջազգային զորքերը, բացի մեծամասնություն կազմող ԱՄՆ-ի զորքերից, իրենց կազմում ունեին ավելի քան 20 երկրների զինված ուժեր: Այս 20 երկրների մեջ էին մտնում Թուրքիան, ինչպես նաև Մաղրիբի արաբական երկրներից Մարոկկոն և Թունիսը, որոնք զինվորներ էին ուղարկել Սոմալի[10]: Ծոցի պատերազմը, ինչպես նաև Սոմալիում տեղի ունեցող ռազմական գործողություններին Մաղրիբի մի քանի արաբական երկրների, ինպես նաև Թուրքիայի մասնակցությունը վկայում է, որ տարածաշրջանի երկրները 1989-1995թթ. չեն խուսափել համագործակցել ԱՄՆ-ի այսպիսի խաղարար և կայունությունը ապահովելուն միտված գործողություններին, ինչը դրական երևույթ էր և վկայում էր Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների՝ տարածաշրջանում տեղի ունեցող գլոբալ գործընթացներին մասնակից- լինելու մասին: Սակայն պետք է հաշվի առնել, որ եթե Թուրքիան կամ Մաղրիբի արաբական երկրներից որևէ մեկը այսպիսի գործողությունները հակառակ համարեր իր շահերին, ապա

---

7 http://articles.chicagotribune.com/1991-01-30/news/9101090475_1_arab-world-arab-countries-turkey Turkey's War Role Threatens Economic Link With Arab Neighbors, January 30, 1991

8 Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Զանգ. 97, Ե. 2006, 538 էջ:

9 http://translate.google.ru/translate?hl=en&langpair=en|ru&u=http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/980511/1998051125.html Египет выступает против отмены Средиземноморский форум, 5/11/1998

10 http://www.un.org/ru/peacekeeping/missions/past/somalref.htm Операции Организации Объединенных Наций в Сомали (ЮНОСОМ I и II)

կարող էր հակազդել դրանց, ինչը 1989-1995թթ. ընթացքում մենք տեսանք Մավրիտանիայի դեպքում, երբ վերջինս Ծոցի պատերազմի ժամանակ փորձեց օգնել Իրաքին՝ ընդդեմ միջազգային կոալիցիայի: Սակայն նույնիսկ այսպիսի դեպքերը չէին խանգարում Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների միջև հարաբերությունների խորացմանը, որովհետև կարճատև բնույթ ունեին, ինչը չէր կարող ազդել Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների՝ միմյանց հետ սերտ հարաբերություններ ունենալու ձգտումների վրա, քանի որ այսպիսի ձգտումները բավականին կարևոր ու երկարատև բնույթ ունեցող պատճառներից էին բխում:

1993թ. հունվարի 13-ին Փարիզում ստորագրվեց Քիմիական զենքի կանխարգելման կոնվենցիան, որի ստորագրող անդամ-երկրների մեջ էին նաև Թուրքիան, ինչպես նաև Մաղրիբի բոլոր արաբական երկրները, բացի Լիբիայից[11], որը հետագայում ևս միացավ այս կոնվենցիային՝ դառնալով նրա կազմակերպության 159 անդամ-երկիրը[12]: Չնայած որ կոնվենցիան ստորագրվեց 1993թ., այն ուժի մեջ մտավ ավելի ուշ, սակայն կոնվենցիայի ստորագրումը Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների կողմից դրական երևույթ էր երկու կողմերի միջև փոխհարաբերություններում, քանի որ նպաստեց միմյանց հանդեպ վստահության ամրապնդմանը:

1995թ. նոյեմբերի 27-28-ին Իսպանիայի Բարսելոնա քաղաքում արտաքին գործերի նախարարների կողմից Բարսելոնյան հիմնադիր կոնֆերենցիայի շրջանակներում սկիզբ դրվեց Եվրոպա-Միջերկրածովյան երկրներ գործընկերությանը: Այս շրջանակներում հետագա տարիներին համագործակցության հնարավորություններ ստեղծվեցին Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների միջև, քանի որ Թուրքիան, ինչպես նաև Մաղրիբի արաբական երկրներից Մարոկկոն, Թունիսը Ալժիրը դարձան Եվրոպա-միջերկրածովյան գործընկերության իսկական, իսկ Մավրիտանիան՝ դիտորդ անդամ[13]: Լիբիան, ինչպես նաև Արաբական Մաղրիբի դաշինք կազմակերպությունը հետագայում ևս դարձան դիտորդ անդամներ[14]: Եվրոպա-Միջերկրածովյան երկրներ գործընկերությանը հիմք դարձավ հետագայում <<Միջերկրածովյան միության>> ստեղծման համար:

---

[11] http://www.opcw.org/index.php?eID=dam_frontend_push&docID=12168 REPORT OF THE PREPARATORY COMMISSION PDF

[12] http://www.4ti.co.uk/northern_ireland_news.asp?id=25397 Libya adopts Chemical Weapons Convention. 05 February 2004

[13] http://www.rau.su/observer/N10-12_96/10-12_09.HTM КОВАЛЬСКИЙ Н. . Расширение ЕС и НАТО на средиземноморском направлении

[14] Պատճառ բռնելով որ Լիբիան չուներ ԵՄ-ի հետ պայմանագրեր, վերջինիս արգելվեց մասնակցել կոնֆերենցիային: Տես http://www.rau.su/observer/N10-12_96/10-12_09.HTM КОВАЛЬСКИЙ Н. , Расширение ЕС и НАТО на средиземноморском направлении

Ուսումնասիրելով 1989-1995թթ. տարածաշրջանային և գլոբալ զարգացումների համատեքստում Թուրքիայի հարաբերությունները Մաղրիբի արաբական երկրների հետ՝ ակնհայտ է դառնում, որ տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները չեն խանգարել Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների միջև հարաբերությունների սերտացմանը, չնայած որ այս զարգացումների ժամանակ Թուրքիայի գործողությունները երբեմն-երբեմն արժանացել են Մաղրիբի արաբական երկրներից որևէ մեկի կամ մի քանիսի բացասական արձագանքին[15]:

1989-1995թթ. ընթացքում Թուրքիա-Մաղրիբի արաբական երկրներ հարաբերություններում նկատվում է հարաբերությունների նոր ոլոր,՝ այն է՝ տարածաշրջանային ու միջազգային կառույցներին անդամակցելու և այս կառույցների շրջանակներում հարաբերությունները կարգավորելու և սերտացնելու միտումներ: Համագործակցության այս ձևը բավական կարևոր էր և նպաստում էր ինչպես Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների փոխհարաբերությունների սերտացմանը, այնպես էլ Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների՝ միջազգային ասպարեզում միասնաբար հանդես գալուն: Սրան ավելանում է նաև այն հանգամանքը, որ տարբեր կազմակերպությունների շրջանում Թուրքիա-Մաղրիբի երկրներ փոխհամագործակցությունը օգնում էր, որ Թուրքիան և Մաղրիբի արաբական երկրները ունենան իրարից շատ չտարբերվող տնտեսական և իրավական համակարգեր, ինչպես նաև ավելի շահագրգռված լինեն փոխադարձ կայունության և անվտանգության ապահովմամբ: Այս ամենն էլ իր հերթին նպաստում էր Թուքիայի և Մաղրիբի արաբական երկրներից յուրաքանչյուրի միջև երկկողմ հարաբերությունների էլ ավելի սերտացմանը:

The relations of Turkey with Maghreb Arbic countries in the context of territorial and global development in 1989-1995

During 1989-1995 in the relationship of Turkey-Maghreb Arabic countries a new field of correlation is seen, that is the trend of membership in territorial and international structures and the regulation and tightening of the relationships in the range of these structures. This form of cooperation was very important and contributed as the tightening of relations of Turkey and Maghreb Arabic countries, as well as Turkey and Maghreb Arabic countries' coming out together in the international area. To all of these is added also the fact that in the range of different organizations the cooperation of Turkey-Maghreb countries helped, that Turkey and the Arabic countries of Maghreb had slightly differing economic and legal systems, as well as be more interested in mutual stability and security ensuring. All these, in their turn, contributed even closer bilateral relations among Turkey and Maghreb countries.

---

[15] Օր՝ Ծոցի պատերազմի ժամանակ Թուրքիայի քայլերը բացասական գնահատականի արժանացան Լիբիայի և Ալժիրի կողմից